



Uhnl

1966



ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲՈՒՆԱՄՐՎԱԿԱՆ  
ՊԱԼԵՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼՅԻՄ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ  
«Սիոն» Արմենիա Թորի, Գիտություն, գովազնություն

"SION" ARMENIAN MONTHLY OF RELIGION, LITERATURE, PHILOLOGY.

1966

ՑՈՒՑԱԿԱՆ

ԹԻՒ 1

## ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐք ՅՈՐ ԺՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԲԵԹՂԵՀԵԿՄԻ ՍՈՒՐԲ ԱՅՐԵՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՑՈՐԴԱՆԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒԲՍ ԱՇԽԱՐՀԻ

Ծննդեան այս երաշապատում գիշերուան մէջ, նորէն կը լսուի երեշտակներու բերեավ աշխարհին տրուած երկնային պատգամն ու հաւասարիք՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Մանուկը որ այսօր վերստին կը ծնի մեր հոգիներուն մէջ, խորհուրդն ու մարմնառութիւնն է խաղաղութեան եւ սիրոյ: Խաղաղութիւնը բղանեն ու կարօսն է եղած դարերով տառապող սերունդներու, պատմութեան մութ, հետազին եւ արիւնոտ ծրագամքներուն դիմաց: Այդ առերսարկու նիչը այսօր աւելի քան շատցած ու բարձրացած է, կեանքի անհամաշափ եւ տրտում գընացքին համբնքաց, եւ դարձեր է սուր ու ցաւազին աղաղակ մը, միլիոններու հոգիէն բարձրացող:

Մեր Տիրոց ծննդեան նախօրեակին, իշխողներու եւ գերիներու այդ օրերու աշխարհին մէջ, երբ խաղաղութիւնն ու սէրր երազներ իսկ չէին մարդոց հոգիներուն, երբ տառապանք, արիւն եւ գրտինք իրարու կուգային՝ յօրինելու անկարելի կեանքը այդ խռովայոյզ դարերուն, չկար աւելի քաղցր երազ ու սփոփանք

187-98

digitised by

A.R.A.R. @

1934 Հւնիսի

քան խաղաղութեան ճայնը, որ պիտի գար խորտակելու արեան ալիքները եւ անուշելու բշուառութեան մոայլը մարդոց սիրտերուն:

Աշխարհը, խռովքի եւ ցաւի այս հովիտը, ինչպէս սովոր ենք ըսել, միշտ սուրբի եւ հերոսի լրասապակներով պատուեր է խաղաղութեան առաքեալները։ Անոնք, մեր օրերու բառով կոչուին բարեկարգիչ, եղբայրութեան ֆարոզ կամ առաքինութեանց ասպետ, մարդեր են՝ որոնք կը ջանան մեղմելու մեր ներքին բոնկումները եւ կարեի հաւասարակշռութեան իջեցնելու պատճառները, որոնք զմեզ իրարու դէմ կը գիտնի։ Այսպիսիներուն է որ կ'ակնարկէ մարգարեն անտարակյոյս, երբ կ'ըսէ. «Իրրեւ զի գեղեցիկ են ի վերայ լերանց ոտք աւետարանչի համբաւուն խաղաղութեան»։

Հակառակ այս իրողութեան եւ նիզին, պատերազմի կիրքը մարդերու մէջ մարելէ շատ հեռու է։ Այս իրողութեան առջեւ սակայն յուսահատ չէ խաղաղարարներու փաղանգը, եթէ եռյնիսկ «յերկիր խաղաղութիւնն, ի մարդկի հանութիւնն» դարեր յետոյ, տակաւին բարձրութեանց մէջ օրօրուող եթերային աւաշ մը քուի, ու չըլլայ իշած աշխարհի վրայ։

Ուրախալի է հաստատել թէ, անսովոր համեմատութեամբ հետզիեսէ կ'անի թիւը անոնց՝ որոնց մէջ կ'ապրի խաղաղութեամբ եւ արդարութեամբ լի թագաւորութեան մը երազը։ Մեր ժամանակներու նշանն է այս եւ աննշան չէ սփոփանքը զոր ամիկա կուտայ սիրտերուն։

Աւետարանի բոլոր տրեալները, որոնց իրաւունքը սուրբ է մեզի համար, կը հաստատեն թէ Քրիստոսի սիրոյ եւ խաղաղութեան ոգին անուշահութ օծումը եղաւ ապականած մարդկութեան։ Ասուածախառն շանչ մը՝ որ թափանցեց քայլայուած եւ ապականած ընկերութեան մը բոլոր խաւերուն մէջ, ուր անիրաւուածներ, վիրալից սրտեր եւ գերիներ կային, ամբարիշտ լուծերու ներքեւ գրաստացած, ինչպէս նաև լոյսի կարօտ կոյրեր եւ նշմարտութեան ուղին կորուսած իմաստումներ, խարխափելով թանձրացած եւ անարշալոյս մուրի մը մէջ։

Ցիսուսի երաշալի ծնունդը ոչ միայն տասուածպաշտութեան երկիւլած զգացումն ու խորհուրդը կը քերէ մեզի, ոչ միայն շնորհներու եւ իմաստութեան, նանաշումի եւ զօրութեան սերմերը կ'անեցնէ մեր մէջ, իր անսուլեր նայուածքին զերմութեամբը, այլ սիրոյ եւ ներազամտութեան, գութի եւ գոհարերութեան կամքը կը պարտադրէ մեր տկար մարմնին մէջ։

Այս գիշեր թող նորէն հնչեն մեր հոգիներուն խորը երկնա-

հընչիւն այն ճայները՝ որոնք բարերաստիկ օր մը երկրի վրայ լսուցցան ծննդեան մութ եւ անշուք այրին մօս, եւ որ հիմա անսահման բարձունքի մը վրայ կը թնդան վերստին, հոս փոխադրելու Ցիսուսով կենդանացած «Խաղաղութիւն»ը եւ յաւերժացած «հանութիւն»ը:

Ժողովուրդ Հայոց, դուն դարերով խաղաղութեան ծարաւն ու իդմն ես ունեցեր, ազատութեան տենչանքին չափ բուռն եւ երկնքին չափ խորունկ: Քեզի պարտադրուած պայմաններու արգասիքը չէ միայն պատճառը այս ըգաւորութեան, այլ որովհետեւ դուն հաւատացած ես թէ խաղաղութեան, սիրոյ եւ համերաշխութեան աշխարիի մէջ միայն կարելի է իրագործել Աստուծոյ քագաւորութիւնը եւ լեցնել մարգուն կարօտը: Խաղաղութեան զգացումը լոյծ, տարտամ եւ վերացական յացք մը չէ եղած քեզի համար, այլ չիկերով զգալի, քանձագեալ ու մարմնացած եեւք մը, պացք մը՝ քու ըգաւանքի քափին մէջ երկնքի դուռները խորտակելու չափ:՝

Դուք, գաւակներ Հայաստաննեայց Եկեղեցւոյ ի սփիւս աշխարիի, որ կը հաւատաք Աստուծոյ Որդիի մարմնով երեւալուն, մեզի հետ միասին այս գիշեր ձեր երկիւղած էութեան խորերէն անգամ մը եւս աղերսեցէք սիրոյ եւ խաղաղութեան հշիանէն որ փարատին մէզն ու մառախուզը, չքանան չարիին ու յուսահասութիւնը, տարագրուին տագնապն ու տիրութիւնը աշխարիի երեսէն:

Այս է եղած համապարօքայ աղօքքը Հայ սերունդներու, որոնք դարերով քալեցին մեծ դամբաներու խորհուրդը եւ հովուեցին հօտք հոգիներուն: Որոնք ամէն Ծնունդի, կրակուած հաւատիք տենդէն, կ'ուգէին տեսնել իրենց անուրջը երկնքի կապոյտին եւ կամ հայրենի հողին վրայ մարմին առած: Միացնենք մեր աղօքքները անոնց մշտամբունց աղերսանքին, ապրեցնելու մեր մէջ սուրբ երազը մեր նախնեաց, այս սրբազն գիշերէն հիւսուող;

Մեր Տիրոց Ս. Ծննդեան առիբով, մեր խորին երախտագիտութեան ու անկեդծ հաւատարմութեան զգացումները մեր սիրելի քագաւորին, Հիւսէյն Առաջինի, ինչպէս նաեւ իրմով գլխաւորուած Յորդանանի վարիչներուն:

Տէրը միշտ անսասան պահէ Հաշիմական գահը եւ անոր անզուցական գահակալին շնորիէ անփորա, երջանիկ եւ արդիւնաշատ տարիներ, իրագործել կարենալու իր ժողովուրդին արդար ակնկալութիւնները՝ խաղաղութեան եւ սիրոյ քաղցր մքնուրտին մէջ, ամէն:

## ԿԱՅՍԵՐ ՏԵՍԻԼՔԸ

(ՆՆՈՒՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Այս դեպքը պատահցաւ երբ Օգոստոս Կայսր էր Հռոմի մէջ եւ երբ Հերովդէն կը քազաւորէր Երուսաղէմի վրայ:

Այդ ժամանակ էր որ մեծ եւ ուրբ զիշեր մը տարածուեցաւ Երկիֆի վրայ: Ամենին մուրք զիշերն էր գոր ունի մէկը տևած ըլլար երբեք: Խորելի էր հաւատալ թէ բռվանդակ Երկիրը իմկած էր նկազի մը խոր: Անկարելի էր չուրք ցամակէն ցանազանի եւ ամենին ծանօթ ուղիներուն վրայ իսկ մարդ չէր կրնար իր ճամրան գտնել: Եւ տարբեր չէր ալ կրնար ըլլալ, ոչ իսկ լոյսի շող մը կը նշուրէր Երկինքին: Բռնը աստղերը իրենց տուներուն մէջ մնացած էին եւ գեղեցիկ լուսինը իր դէմքը կը պահէր:

Լուսրիւնն ու անշարժութիւնն խուսարին չափ զգալի էին եւ շօսակելի: Գետերը իրենց ընթացքին մէջ կանց առած էին, հովը չէր շարժեր եւ նոյնիսկ բարտիներու տերևները դադրած էին սոսափելէ: Եթէ մէկը բայց ծովափի Երկայնքնամ, պիտի նըկատէր թէ ալիքները աւազին վրայ չէին խուսեր, եւ երեւ ուրիշ մը բափառէր անապատին մէջ՝ իր ոտերաւ տակ աւազը տղկար մրմունցերով պիտի չիշրուէր: Ամեն անշարժ էր այնպէս՝ որպէս թէ բարացած ըլլար, չխանգարելու համար ուրբ գիշերը: Խոսք կը վախնար ամենու, ուզը չէր կրնար իշնալ եւ ծաղիկները չէին համարակեր իրենց բոյը արտաշնչել:

Այս գիշերին մէջ գասաներ իրենց գոհերու չինուսեցին, օսերը չսայրեցին եւ շուները չհաշեցին: Խոկ իմ որ աւելի երաշալի էր, անկենան իրեր պիտի չկամենային գիշերաւս սրբութիւնը խանգարել՝ իրենք զիշերներ չար արարքի մը տրամադրելով: Ոչ մէկ կենծ բանակ պիտի կարենար կոպամի մը բանալ, եւ ոչ մէկ դաշյն կարի մը արիւց պիտի կարողանար դուրս քաշէլ:

Հռոմի մէջ, նոյն այս գիշերին, մարդոց

փաքր խռով մը դուրս եկաւ Կայսեր պալատէն եւ Մեծ Հրապարակը (Forum) կորելավ յառաջացաւ դէպի Կապիտոլիոն (Capitol), Երեկիմ, Սերակաւտականները հարցուցեր էին Կայսեր թէ որեւէ առարկութիւն պիտի ամենա՞ր երէ Հռոմի սրբազն Բարորին վրայ ի պատի իրեն տանար մը կանցնէիմ: Բայց Օգոստոս իր հաւատութիւնը ամիշազական չէր տուած: Տէր զիտեր թէ աստուածներուն համար համենի պիտի ըլլա՞ր իրենց նույրուած տանարներուն ուզնի ի վեր տեսնել ի՛ր ալ ազօտանդին: Հետեւարար պատասխանած էր թէ նախ կը Փափաէր աստուածներուն կամքը գիտանալ այս մասին՝ իր պաշտպան ոգին ընծայելով ցայգային գիշերերութիւնը: Խենքն էր որ, քանի մը վաստակելի բարեկամներու ընկերակացութեամբ, կերպար այս գօնը մատուցալու:

Օգոստոս արտօնած էր որ զինք կրէին իր գահաւորակով, որովհետեւ ծեր էր եւ ինեւ համար մեծ ճիզ ու շամք պէտք էր ուղի Կապիտոլիոն առաջնորդող սատիմանները բարձրանալու համար: Բնած էր գոհարերութեամ տատրակները պարունակող վանդակը: Ոչ կրօնաւորներ, ոչ զիմուլորականներ եւ ոչ ալ ծերակաւտակամներ կ'ընկերա՞նյին իրեն, այլ միայն իր ամենին մուերիմ բարեկամները: Իր առջեւեն կը յառաջանային ջահակիրները՝ լուսաւորելու համար գիշերուան խաւարով ծածկուած ճամրան, իսկ իրմէ եւու կու զային բարուկները, որպէս կը կրէին եռուստանին, դա նակ'երը, ածուխը, սրբազն կրակն ու տակաւին բռնը այն բաները՝ որպէս աներաժշտ էին գիշերերու խանգարել:

Ճամրու ըմբացքին Կայսրը գուարքօրէն կը հնասակցէր իր հաւատարիմ հետևորդներուն ենեւ, ինտեւարար ոչ ոք նշմարեց գիշերուան անսահման լուսիւնը ու համդարտութիւնը: Սակայն երբ Կապիտոլիոնի Բլրամ բարձրագոյն կետը հասան, այն բաց

վայրը՝ ուր ծերակառտականներ կը մ.առ-  
ծէիք տաճարը բարձրացնել, միայն այն  
ատեն իրե՛ց վրայ տարածուցան անսպառ  
պատահարի մը թերկայ եղած ըլլալու զի-  
տակցաւք խնիք:

Ասիկա չեր կրնար սովորական գիշեր  
մը ըլլայ, օրովհնետնե վերը, հո՞ն, ապս-  
ռած ծայրանախից տեսան ամենէն տարս-  
սովոր գոյուրիս մը: Նախ կարծեցին թէ  
հիմ, ձեւափխուած ընկույթնի կոնդ մըն  
էր. յեւոյ երեւակայեցին թէ Արամազդի  
տաճարկէ բարէ արձան մըն էր այդպէ՞ն  
մինչեւ ապատածք բարձրացած: Ի վերոյոյ  
բորդին համար ալ յստակ դարձաւ թէ այդ  
միայն պառաւ հարցուկ մը կրնար ըլլալ:

Անսենք չիմ տեսած նման տարիեւու  
Խորչակներէն հարուածուած եւ հոկայաձեւ  
կազմուածնակ գոյուրին մը: Պատու այս  
գուշակակին երկիւու կը ներշնչէր. . . Եթէ  
Կայսըր մերկայ չըլլալ, բարոն այ ակրի-  
քարքի մը մէկ կրնեց տաւմերը պիտի փո-  
խէին:

«Ան է», փափսացին իրարու, «ա՞ն, որ  
ապրան է այժման տարիները՝ արքան որ ա-  
ւազի հասկիներ կամ իր հայրենի տիերքուն  
վրայ: Ինչո՞ւ միշտ այս գիշեր գուրս եղած  
է իր քարայրէն: Ի՞նչ կը գուշակէ առ Կայ-  
սէր եւ Կայսրութեան համար. պի, որ իր  
գուշակութիւնները ծառերու տերեւներուն  
վրայ կը գոր, եւ որ գիտէ թէ հովը գուշա-  
կութեան բառերը պիտի տասի տանը՝ որուն  
համար արտաքրուած եւ անօնէք»:

Այնքան սարափած էին, որ ծաւինի  
պիտի իշեային եւ իրնեց նախանձերը գիտ-  
նին պիտի նևշէին անմիշապէտ որ գուշա-  
կուին շարժում մը ընթէ: Սակայն առ ան-  
շարժ կը մեար, կարծէն ամենեթան ըլլալու:  
Զարսայեցաց սպասածի ծայրաւասին  
կիգած եւ ափով աչենքը պահպանած, առ  
կը նայէր գիշերուած մէջ: Նստած էր եռն  
այնախէս, օրուկու թէ այդ բարուր բարձրա-  
ցած ըլլալ՝ աւելի՝ յստակորէն գիտելու  
պատահար մը որ ենուած կը կատարուէր: Ան կը բար բաներ տեսնել նման գիշերի մը  
մէջ:

Ճիշդ այդ պահուն, Կայսըր եւ իր ենու-  
արդները նշմարեցին թէ արքան շշշուուած  
էր յօսարք: Ոչ ոք կրնար բաղկաշափ մը  
ենուուն տեսնել: Եւ ի՞նչ համբարտութիւն-

ի՞նչ լուուրիւն: Նոյնիսկ Թիգեր գետի մըր-  
ունչը չէին կրնար լսել: Կարծէն ողը զի-  
րենի կը խեղդէր, քրտինիք պապ կարինները  
երեւցան անոնց նակատներուն վրայ եւ ա-  
նոնց ձեռները ընդպարմացած էին ու անզօր: Անմին պատահելիք սարսափելի ազէւոր մը  
նախազգացաւմն ու վախը ունենին:

Բայց ոչ ոք իր վախոր յայտուի կ'ընենք եւ  
բոլորն ալ Կայսեր կ'ուսէն թէ ասիկա լա-  
նչաց մըն էր. ամբողջ Բնութիւնը շունչը  
պահած՝ նոր աստուած մը ողջունել կը  
պատրաստուէր:

Անոնք Օգաստոսի խորհուրդ տումն գո-  
հարերութեան սկսին եւ ըսին թէ պատա-  
գուշակուին հաւանօրէն քարայրէն դուրս  
եկած էր՝ ողջունելու Կայսեր ոգին:

Սակայն իրականաւթեան մէջ հարցուկը  
այժման տարրած էր տեսիլով մը, որ  
նոյնիսկ չէր գիտեր թէ Օգաստոս Կատի-  
տոյիսն բարձրացած էր: Ան իր եւրեւամբ  
իրավագուած էր ենուաւը երիշիր մը, եւ  
կ'երեւակայէր թէ կը շրջէր ընթարակի  
գաղտակայրի մը մէջ: Մարտին մէջ առ շա-  
րունակաբար իր սուսերը կը զարմէր երեւ-  
ակայսկան մասնաներու եւ խոտերու: Ծոեցան եւ ձեռներովը շօջակից: Ոչ, յօս  
չէր, այլ գանունիներ էին: Ան կը քայէր  
ժամացած բազմարի ոչխարթերու մէջ:

Ենուոյ նկատեց հովիսներու խարայէր,  
որ կը բոցավանէր դաշտին մէրտող. իր  
հայութերը ուզողց դէպի այդ խարայէր: Հո-  
միւները կը նետանյին կրակին շարջ, ի-  
նենց բայ նետնայով երկրածախը մահակ-  
ներ՝ որոնցուն ինենց հուսերը կը պաշտ-  
ուանէին զազաններու: յարակաւսներէն:  
Սակայն փաքրամարմին, շաղացոյ աշէերով  
եւ ցախաւել պաշերով կենացանեները որոնք  
խարայլիին արակած շողերուն ընդմշչէն  
կը ցցուէի՞ն, զայլացուներ չէին: Այլ հո-  
միւները իրնեց մահակները չէին նետեր  
անոնց վրայ, շուները կը շարութակէին ի-  
րենց հուսեր, ոչխարթերը չէին փախեր եւ  
գազանները ի վերջոյ կու գային համգուա-  
նու մարդկային եակներու մօս:

Այս բարորը գուշակուին տեսաւ, սա-  
կայ միաժամանակ ոչինչ գիտէր իր ենու՝  
բարորը վրայ կատարուածէն: Ձէր գիտեր  
թէ հօգ զահանեած մը կը բարձրացնէին,  
ածուին կը վատէին, խունիք կը ծխէին,

եկ թէ՝ Կայսրը ահա վա՞ղակին մէջն կ'առմէր ազատիներէն մին, զոհաբերելու համար։ Սակայն մեռները այնքան ըմբարմացած էին որ չեր կրնար բաշունը բռնել։ Թեփ մէկ քայլումով ազատին ազատեց ինքիննէ եւ անետացաւ գիշերային խաւարին մէջ։

Երբ այս պատահեցաւ, Կայսեր հետեւարդները կասկածածէն նայեցան պատառ գուշակուինին։ Կը կարծէի՞ թէ ան էր այս աճախորդութեամ հեղինակը։

Կրնայի՞ն երեք գիտակ թէ ամբողջ այս պահում պատար ինքո՞ք իցած կ'ի՞րեւակայէր եռունենու խարոյին մօս, եւ մտիկ կ'ըմէր տկար ձայն մը որ գոգգարավ կու գար մասուած նման լուս գիշերին մէջն։ Բաւական երկար մտիկ ընելէ ե՞տք միայն կրցաւ հասկնալ թէ ձայնը երկի՞նն կու գար։ Ի վերոյ ան բարձրացուց գուշը ունեաւ բերել, փայփում մեւեր, որոնք խաւարին մէտքն կը բեւածէի՞։ Հրեշտակներուն բռնուած խումերը դէպի հոն դիմեցին ուրախուրեան նիշերով եւ հալիները իրենց անապարանէն գրերէ կը վագէին։ Երբ բազաֆ հասան, մեռան որ հրեշտակները հաւաքուած էին բազաֆարան մօս գունուող ցած փարախի մը վերեւ։ Խեղանկար մէկ գիտառերով կը բռէին բ՞նդարակ դաշտառ վայրին մէկ կողմէն միւսը։

Մինչ գուշակուին մտիկ կ'ըմէր երեշտակներու երգը, Կայսրը կը պատրաստուէր նոր գուսերերամի մը։ Լուաց մեռները, մաքրեց գոհասեղամը եւ առա յաշոր աղամին։ Եւ, հայուակ որ իր ամբողջ ուժը կը գործածէր զայն մասուր բռնել կարեւալատ, աղամինին սահում մարմինը դուրս եկաւ իր ափերէն եւ բռչումը ի՞քինք նետեց վեր, գէտի անբախցելի գիշերը։

Կայսրը սոսկաց. ծունկի նետուեցաւ եւ պարեց իր պաշտպան ոգիիմ։ Ազացեց որ իրեն ուժ եւ կարողութիւն ընծայուի՞ դիմագրաւելու եւ վանելու համար այս ռեյերին կողմէ կանխագաւաշկուած աղէտները։

Այս բաները եւս գուշակուին չխենան եւ յասեց։ Եր ամբողջ հոգիով ա՞ մտիկ կ'ըմէր երեշտակներու երգը, որ հետզինեւէ կը մօտենար եւ աւելի բարձր ու զօրաւոր կը նեշէր։ Ի վերօյ այնքան ուժգին դարձաւ՝ որ արքեցուց հովիմերը։ Անմենք բարձրացան իրենց արմուկներու վրայ եւ տեսան արձար-սպիտակ երեշտակներու ուռուզում խումբերը, որոնք խաւարին մէջն կը շարժէին երկար իրավունք ապահով կայսերը պարզած։ Վերը, շատ վերը, մքանցը լուսաւարուած էր անոնց փայլող քեւերէն։

Իսկ գաղրօղ բռչուններու նման։ Ուն ք վիճներ եւ բարինաներ ունէիմ իրենց ձեռներուց մէջ, ուրիշներ՝ ցիքերաններ եւ տաւուիներ, եւ իրեց երգը կը ենչէր մանկական շկնչող ծիծաղի նման կենսախինդ, եւ այնքան անհոգ՝ որքամ արտայտին գեղգեղանէր։ Երբ հովիները լսեցին, եղան իրենց սառկած տեղէն եւ պատրաստուեցան իրեց ի բնակած լեռնահայեաց բազաֆ երարկուած կայսերը կը հովիները լսեցին, եւ այսինքն անսիրուած պատմելու։

Անօնք դարձարձիկ ու մեղ արահետէ մը խարխափերով սկսան յատաշանալ եւ գոլաշանին հետեւեցաւ անուց։ Յանձնարձ ենք, յերան վրայ, լոյս մը շողաք մեծ, յատկ ասուց մը կը շողաք գագարին վրայ եւ եօն հաստատուած հապաքը այդ լոյին տակ որպէս արծար կը փալփիւր։ Հրեշտակներուն բռնուած խումերը դէպի հոն դիմեցին ուրախուրեան նիշերով եւ հալիները իրենց անապարանէն գրերէ կը վագէին։ Երբ բազաֆ հասան, մեռան որ հրեշտակները հաւաքուած էին բազաֆարան մօս գունուող ցած փարախի մը վերեւ։ Խեղանկար մէկ սկսուկ նիշերին մըն էր, յարդէ տամինով, մերկ սպասարձ որպէս յենապատ ունեցագ։ Անօր վրայ կախուած էր Աստղը եւ դէպի հոն կը դիմէին հոնշանաներու աւելի մեծ քիւով խումբը։ Անօնցտ ունանէ կը նստին յարդէ տամինին վրայ, իսկ ուրիշները կը ցատկէն շիմուրեան յետսամասի լեռնային ցից ժայռին վրայ։ Եւ տակախին ուրիշներ ալ օդին մէջ տակախ կը մնային իրենց բեները պարզած։ Վերը, շատ վերը, մքանցը լուսաւարուած էր անոնց փայլող քեւերէն։

Ճիշդ այց պահուն երբ Աստղը փայլեցաւ լեռնահայեաց բազաֆին վրայ, ամրող թրոնութիւնը արքեցաւ եւ Կապիտոլիոնին թրուրան վրայ կեցողները չին կընար չուսնել այդ։ Անօնք կը զային միջոցին մէշէ՞ն ուն բացազ բարմ այլ ջոյզ օդի հոսանքը, բաղցը բոյրեր կը շարժէին, թիահեր կը մրմինէր, աստղերը կը փալփիւմ եւ յանձնար լուսինը ինքիննէ ցոյց տուաւ երկներին վրայ եւ լուսաւարեց երկիրը։ Եւ ամսիքուն մէշէ՞ն երկու ազամինները շրջապայմաններ գործելով վար իշան ու համգչեցան Կայսեր ուսերաւ վրայ։

Երբ այս երաշքը պատահեցաւ, Օգոստուս սովի ելաւ հպարտ ու երջանիկ, մինչ իր բարեկամները ու ստրուկները ծունկի կիշխային:

«Ռդղո՞յն, Կեսար», անմենի կը գոչէին, «Էւ պաշտպան ոգիդ պատասխանած է ևնզի: Դուքս ես առուստածը որ պիտի պաշտուի Կապիլուսինի վրայ»:

Եւ մեծարանին այս գոչինը գոր մարդիկ իրենց վերացումին մէջ արտաքրեցին որպէս Կայսեր ընծայուած գալքառութիւն այնքան զօրաւոր էր՝ որ պատու գուշակուին լսեց: Մրգիցաւ տեսիթէն: Ելաւ ապատածին հօրը գտնուու իր տեղէն եւ մօտեցաւ մարդոց: Կարծէք խորխորատիք ընդուրքէն սեւ ամպ մը բարձրացաց եւ լեռն ի վար խուժած ըլլար: Սարսափազու էր պառաւը իր այդ տարիին մէջ: Կաշու մազգերը թնառներով կը կախուի էմի իր գլխին, ուկրները ցցուած էին եւ ծառարուին կարդութիւն ունեցող բռի մորքը անհամար ակօններով ու ծաղերով կը պատուր մարմինը:

Սարսափազու այդ կերպարանելով անդէայի Կայուրը յառաջացաւ: Մէկ ձեռքով բռնեց անոր գաստակը եւ միւսավ ցոյց տրւաւ ենուաւը Արեւելքը:

«Նայէ», երամայեց ամ եւ Կայուրը աշ-ժերը բարձրացաւ ու տեսու: Կամարակապ երկինքը իր առջեւ բացուեցաւ եւ նայաւածէք նամբորդեց դէպի հեռաւոր Արեւելք: Ան տեսաւ ժայռելէն ցրց պատի մը ներքին ծուարած ցած փարախ մը, եւ դրան մէջ՝ ծիրադիր ժամի մը հովիսներ: Մատրին

առջեւ տեսաւ մանկիիկ մը առջեւ ծունկի ելած երիտասարդ մայր մը. մանկիկը պարկած էր զետինը փռուած յարդի խորքի մը վրայ:

Եւ գուշակուելիին խոշոր, համգուցածն մատոները ցոյց տուին խեղճ մանկիիկը: «Ողջո՞յն, Կեսար», պռոաց ան արհամարեանկան ինեղուիքի մը ցայտին ընդմէշէն: «Առաւասիկ Առուստածը որ պիտի պաշտուի Կապիլուսինի վրայ»:

Այդ պահուն Օգոստոս եւ բաշուեցաւ անմէն՝ որպէս խելազարէ մը: Սակայն գուշակուելիին վրայ ցարեցաւ մարգարեւութեան հզօր ոգին: Անոր մուր ու ուկար աշխերը սկսած բոցավառի, ձեռքերը կերկարէն դէպի երկինք, եւ ձայնը այնքան փախւած էր՝ որ կարծէք իրը եղած չըլլար. այդ ծայնը այնքան ուժգին եւ հնչեղ էր, որ կրնար ամբողջ երկրագունդին լուռի: Եւ արտասանեց բառեր, որոնք կը բաւէր քէ ասուղերէն կը կարդար.

«Կապիլուսինի Բլուրին վրայ պիտի պաշտուի աշխարհի Փրկիչը, Քրիստոս, եւ ոչ քէ տկար մանկանացն մը»:

Երբ այս խոնքը ըստ, յառաջացաւ սարսափած մարդոց մէջն, դամդազօրէն լիռնէն իսաւ եւ անհետացաւ:

Սակայն յաջորդ առաւու Օգոստոս խոսորէն արգիլից իրեն նուիրուած տանարին կերտումը Կապիլուսինի վրայ: Եւ փոխարէն նոյն վայրին վրայ նորածին Ասուտած-Մանաւելին ընդայուած սրբարան մը շինեց, գայն կոչելով Երկինքի Խորան:

Թրգմ. Ա. Գ.

ՍԵԼՄԱ ԼԱԿԵՐԸԶ

## ՓԱՐՈՍՆԵՐԸ

Գրիգոր Նարեկացի, հեղեղ՝ ողբերգութեան,  
Երեսանիկեալ աղօքք, արցունիք խըդնահարի...  
Շանթաշառաչ երկինք ու ծովի փորորկածայն...  
Միրտք շրջներուդ վրայ խարոյէի պէս կ'այրի'....

Նընորհալին ներսէս, սիրակարկա՞չ աղբիւր,  
Քերքո՞ղ Մեսրոպաշունչ, խորհուրդին մէջ խաչի  
Ա. Բ. Գ. ռ. կ եիւսուած աղօքք յուզումնալուր,  
Նարականիդ շունչով հայացընող ոգի'....

Ֆրի՞կ մեր արդարասէր, դատուառի ճրման'  
Մերք ռոթութեամբ ու մերք զայրացումով լեցուն,  
Ընդվլութելով կեանիք օրէնքին դէմ դաժան'  
Կ'երքաս խարանելով անկուշո բնազդը մարդուն....

Սայա՞ք նովա, գարնան վարդենին ես բուրեան,  
Ուր սոխակներ կու լան սազիդ դէմ անապակ.  
Ըստեղնաշար ցաւի, սիրոյ, Եղբայրութեան,  
Դուսան եւ արեղայ, խնկարո՞յր նահատակ....

Խոմիտա՞ս, Կոմիտա՞ս, երգի երկնակամար,  
Դուն եղեռնի նամրուն' մարած ջահ ու խորան.  
Յոյզի ակունք, երգի ամենասուրբ հանճար,  
Գահավիժեա՞լ խորհուրդ՝ ցաւին մէջ լըռութեան....

Սաքեա՞ն, Խաչատուրեա՞ն, նոր փարոսներ երգի,  
Հայ գաւառներն իրենց մեծ դամբանեն հանած'  
Զեր հանճարին լոյսով դուք կոչեցիք կեանիք,  
Եւ հանչցուցիք որպէս նըւագ համատարած:

Կ'անցնի՞ն, կ'անցնի՞ն դարեր, դուք հովերու նըման,  
Դուք ծովերու պէս յորդ՝ դաշնաթաւալ կ'երգէք  
Իբրեւ աւանդն Հայուն, իբրեւ շունչն անվախնան,  
Իբր յաւերժի՞ն ձեռքով դեկավարուած համերգ....:

ՄԱՆԻ ԱԹՄԱՁԵԱՆ

15 Մայիս 1965,  
Փարիզ

## ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏ ՔԵՐԹՈՂ ՇԻՐԱԶԻՆ

Շիրա'զ, Շիրա'զ, տէրվիշ ֆերքողն հայրենիքիս,  
Մատաղ ըլլան մուսաներուդ սիրտս ու հոգիս,  
Եւ Շիրազի վարդերուն պէս անուշաբոյր,  
Քու խօսքերուդ հազար, հազար ես տամ համբոյր:

Շիրա'զ, Շիրա'զ, խօսնակն Հայոց նոր աշխարհին  
Ու ջերմ պաշտպանն ու պահակը հայ լեզուին,  
Ինչքա՞ն աւիւն ու կրակ կայ երգերուդ մէջ,  
Մորենի մ' ես դուն բոցավառ ու միշտ անշէջ:

Շիրա'զ, Շիրա'զ, ո'վ մեծ ֆերքողն հայրենիքիս.  
Ո'վ տուալ ֆեղ սիրտն այդ աղուոր, գերզգայուն,  
Որ՝ քնարիդ լարին վրայ միշտ թըրքուն,  
Կ'երգես սէրը մեր լուսաշող հայրենիքին:

Շիրա'զ, Շիրա'զ, տէրվիշ ֆերքողն հայրենիքիս,  
Պատգամդ յուզիչ, խանդավառող ու հոգեցունց,  
Ու դղեաւ պամդուխտ, ասուանդական եղբայրներուդ  
Ու քոյրերուդ, յուզեց հոգիս, սիրտս, գորովս:

Շիրա'զ, Շիրա'զ, անմահ ֆերքողն հայրենիքիս,  
Մատաղ ըլլան մուսաներուդ սիրտս ու հոգիս,  
Եւ Շիրազի վարդերուն պէս քաղցրաբոյր,  
Հայ բառերուդ. Հայ խօսքերուդ անգուգական

Ու սրտարուխ, հազար, հազար ես տամ համբոյր:  
Օրհնեա'լ ըլլայ յիշատակը այն մայրիկին,  
Հայ մայրիկին, որ ֆեղ տուալ սիրտ մը անգին:

Խայրապի, Քէթիս

ՑՈՎԱԷՒՓ ԹԸՐԳԱՐԵԱՆ

## ԳՐԱԿԱՆ

### ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

ՀԱՐԻՒՐԱՄ ԵԱԿ ՄԸ

Հայ Գրականութեան խնմեացգ արժէքներէն մին է Տիգրան Կամսարական, որուն ծննդեան հարիւրամեակը կը լրանալ ներկայ տարբէջանին (1866-1941)։

Անցնող այս հարիւրամեակը մեր մտայնութիւններէն, բարքերէն, աւանդութիւններէն եւ աշխարհայեացքն շատ բան փոխած է կամ զեղչած։ Արեւտահայ (ինչպէս եւ Արեւեահայ) գրականութեան մէջ կատարած են մեծ փոփոխութիւններ, ինկած են հին փառքեր եւնոր ու երիտասարդ գրադէտներու փաղանգ մը և կած է իր արդար տեղը գրաւել գրականութեան մեր պալատին ներս։ Սակայն ժամանակի աւերներուն եւ մտայնութիւններու փոփոխման դիմացած են սքանչելի տոկունութեամբ մը՝ մեր շաբք մը զրոյններու երկերը, որոնց տակաւին այսօր, մօտ զարու մը հռուստորութիւննէն, կը ունան մեզ թթացանել իրենց բերած յուզուններուն սարսուներով։

Այդ ճշմարիտ արուեստագէտներէն է անտարակոյ Տիգրան Կամսարական, Հեղինակը «Վարժավաետին Աղջիկը» վէպին, եւ ամենէն կարկառան դէմքերէն մին Արեւտահայ դրականութեան այն շարժումին՝ որ իրապաշտ անոնը սասցաւ եւ որուն արտայայտինները հանդիսացան Արփիար Արփիարեանի, Գրիգոր Զօրիափի եւ Լևոն Բաշալեանի նման մեծատաղանդ գրագէտներ։

Մնած գրագէտն էր ան, ներքին այն բրնձողական գրայնութեամբ օժտուած՝ ուրուն նորին։ Կրնար իր շրջապատը դիտել բոլորէն տարբէր ընկայութեամբ մը եւ իր սպասուութիւնները թուլքին յանձնել այնքան ճշգրիտ այլ յուզաթաթաւ արուեստով։

Իր գրականութիւնը իրապաշտ գրոցին կը պատկանի. «Վարժավաետին Աղջիկը» եւ

Սրմաքէշխանիւեանի «Ամիրային Աղջիկը» կու զան փառապսակը կազմել արդ շարժումին։ Առաջինը դրուած է շարժումի սկզբնաւորութեան, եւ կարծէ գրապէս կ'ապացուցնէ այդ զպրոցին կտրելիութիւնները՝ որոնք Ա. Արփիարեանի կողմէ սահմանած ու բացատրուած էին. «Վարժավապետին Աղջիկը» տեսութիւններու փորձարկում մըն է, եւ որպէս այդպիսին՝ յաջող իրազործում մը։ Խակ Ամիրային Աղջիկը կը հանդիսանայ այդ շարժումին լրումը, եւ իր մէջ կը մէկտեղէ իրապաշտ ուղղութեան առաւելութիւններն ու առանձնայատկութիւնները, ինչպէս որ զերծ չէ անոր թերութիւններէն ալ։

Տիգրան Կամսարական, ծնած Պոլոսյ մէջ 1866-ին, վայելած է այն բոլոր չույնանքներն ու հոգածութիւնը՝ զորս մէծահարուստ հայր մը եւ որդեսէր մայր մը կրնային ընձեռել իրենց զաւկին։ Մեր գրականութեան այն բացատիկ բախտաւորներէն է՝ որ գրադէտ ըլլալով հանգերծ չէ զգացած ու «Ճաշակած» զիրի ասպարհէին ապերախտութիւնը։ Երիտասարդութիւննէն հսկ մտած հօրը ծխախտում մէջ, հնողհնետի դարձած է ամառ գրագէտը, հազիւ երբեմն իր զըրշին գեղեցիութիւններով հրճուելու առիթը տալով ընթերցողներուն։

Վիպագիր է ան, միաժամանակ տաղանդաւոր նորավիպագիր, որուն տասնեակի մը՝ հանող նորավիպերէն ամենէն աւելի կատարեալ արուեստի զրումը կը կրեն «Յարօն», «Հովհուլցը» եւ «Ընկուլըն» կողովը։

Սակայն Կամսարականի հոչակը կը հիմնըրկ Վարժավաետին Աղջիկը վէպին վրայ, որ ոչ միայն իրապաշտ շարժումին, այլ

ամբողջ Արեւմտահայ զրականութեան առաջին մեծ ու արուեստի գրոցմբ կրող զէպն է: Առաջին անդամ երեցած է 1896-ին Սրբափարահանի Հրատարակած «Արեւելք»ին մէջ որպէս թերթօն, եւ ապա հրատարակւած է առանձին հատորով: Խնչպէս թուականէն խսկի յայտ կու գայ, «Վարժապետին Աղջկից դրուած է Երբ հեղինակը հազիւ քան տարեկան էր: Բայց հոս խսկ է վէպին գոլխաւոր արժէքը, ձեռով մը՝ թովչութիւնը: Խնչպէս կրնար պատանութեանէ հազիւ ոտքը դուրս երկնցուցած երիտասարդ մը զրել տնից՝ որպէս թէ կեանքի երկար տարիներու փորձառութիւնը ունենար իր շալակին եւ իմաստութիւնը՝ իր իմացականութեան խորչերուն մէջ: Տակալին ճշմարիտ եւ բուռն սիրոյ մը տառապաններէն չմրրեած սիրտ մը ինչպէս կրնար այնքան ճշշորիտ եւ խոր թափանցողութեամբ նկարագրել երիտասարդ ու դժբախտ աղջկան մը տառայտանձներք:

Պատասխանը՝ նրբան ալ անհաւանական կամ թէ ական թուի, պարդ է — իր տաղանդին ու միթիայի իր տաղանդին չնորդէ: Ու թերեւս տաղանդի այս յանկարծական (ու ժամանակար ժաղանա ալ) բռնկումը չէ՞ պատճառը որ Կամսարական վէպին հրատարակութեանք քանի մը տարիներ ետք ա'լ որեթէ չերեւի գրական հրատարակին վրայ եւ միպագրի ու արուեստագէտի իր համարւը հիմնաւորող աւելի ընդարձակ կամ խորունի երկիր չարտադրէ: Օչական, մեծ քննադատու, որ Կամսարականի հետ ունեցած է ատրիները՝ վրայ տարածուող ու մինչեւ առ մերջինին մաւր հանող բարեկամութիւն՝ մը, այս ամրութեան պատասխար կը ջանայ՝ փնտաւէլ Կամսարականի դուռարականութեան մէջ: իրը փաստ կը յեւէ հետդինական մէկ նամակէն վերցուած գործերու ծրագիր մը, ուր Կամսարական կը թուէ թէ ի՞նչ աշխատանքներ կը ծրագրէ բնել: Սակայն որոյ է որ բոլոր այդ ծրագիրները մնացած են նո՞ն, թիւղթին վրայ՝ թերեւս անոնցմէ ումանք երկար խոկումներաւ նիւթ մէ հայթաթած արուեստագէտին, եւ բայց տիտուր փաստ մըն է իրականութիւնը՝ որ Կամսարականի մէպէն ու քանի մը նորպէս պիքը մէկ սիրտ գրեթէ ոչինչ՝ անի արձանագրելիք անառաջանական պատճառը:

Սակայն «Վարժապետին Աղջկից» առանձին արդէն պիտի կարենար Կամսարականի պատճառվել մնայուն եւ պատուաւոր տեղ մը մեր դրախնութեան մէջ՝ ուր, դժբախտարար, միշտ չէ որ կը հանդիպինք այսքան յաջողզ իրագործումներուն:

Պոսու Հայ կեանքին վերցուած հարաշայուս եւ առօրեայ գէպքեր կը կազմէն ատազը այս վէպին: Հոն ոչինչ կայ արուեստական, շնձեռու, երևակայական, ոչ-համոզիչ: Տիպաները, ընծանրապէս նկարարուած մեծ փարզետութեամբ, մին ու ոսկոր հաղած անձեր են, որոնց կարելի է հանդիպի ամէն օր, եւ ամէն տեղ: Առաջին անգամ է որ Կամսարականի չնորդիւ Արեւմտահայ գրականութեան մէջ կը մտնեն պարզ ժողովուրդին կեանքին վերցուած գէպքեր, անձեր, վիճակներ եւ հոգեբանութիւններու նկրողութիւններ, բոլորն ալ իրագործուած պարզ, մաքուր եւ ամէն գառապէց համենալի աշխարհաբարով մը:

Գործին առանցքը կը կազմէ Աստիկի, աղջկանց գիւերօթիկ վարժարան մը նոր աւարտած եւ իր «Վարժապետ» հօր տունը մերադարձած աղջիկ մը: «Վարժապետ» ընթացիք իր փառքի օրերը մաշեցուցած եւ այժմ՝ իւլիսած տան մը երգիբն ծուարած արգահատելի արարած մը: Կինը տիպարն է Հայ աւանդուպահ՝ մօր: տանտիկին, իր շոնեցածն խկ ներծին բնուունակութեամբ մը մտակարարող, կրօնասէր, նախապաշտումներու ցանցին մէջ ապրող եւ առումնեն ու միակ աղջիկէն զատ աշխարհի մրաւ ուրիշ էակ սիրելի շնանցող:

Վարպետութեամբ գծուած երեք այս տիպարներէն զատ տակաւին կայ Գորեգիշն, խանութպանի աշկերտութենէն բարձրագուծ ու փանուականի դիրքին տիրացած երիտասարդ մը, որ, իր տղեղ Փիղիքականին ասկ իր պահէ գիւնանձն ու ազնիւ ընութիւն մը: այս ազնուութիւնը վէպին մէջ այնքան չափանցութեան տարածած է, որ ի վերջոյ որեթէ կը համի անհաւանականին ամանենքուն կը խնդրէ Աստիկի մեռքը, եւ առաջին համաձայնութենէ մը ետք անականիայունն ետք կը ստանայ իր նույրած մտասնին, որովհետեւ «Վարժապետ» աղջիկը, վէպին մէկ վարպէտայ հանգոյցին

չնորհիւ ծանօթացած է մեծահարուստ քջոջիկի մը միակ զաւկին ու անմիջապէս սիրահարած ալ, երիսասարդ ու անփորձ աղջկայ մը ամբողջ խանգով:

Վէպին գլխաւոր հերոսներէն մին է նաև Արամը, մեծահարուստին շխացած եւ ցոփ որդին, որուն միակ զրազումն ու «միտ բանին» է Հօրը հարստութիւնը մսխել գիերային վաստամբաւ զրօսավայրերու մէջ։ Ետա արագ տրուած գիերերու նորհիւ յըստակ կերպով պատկերուած է Աստղիկի ապագայ ամուսնին տիպարը. տիպար մը, որ իր մտերիմ բարեկամին՝ Թորոս Պէյրի հետ կր կազմէ զոյլը վէպին ոչ-դրական տիպարներուն։ Եւ ինչ տիպարներ։ . . . Թորոս Պէյր, իր բարեկամին նման շուայտ եւ հարուստ անգործ մը, որ տառջին իսկ վայրկանին դէմ է եղած երիսասարդներուն ամուսնութեանն նման պարկեշտ քայլ մը հմայեցնելով Արամին, կը լանայ եւ կը յաջորդի մերդալուսին օրերուն իսկ երիսասարդը վերադարձնել իր նախկին շուայտ կեանքին, միւս կողմէ ի զորով փորձերով գեղեցիկ երիսասարդունքին հետ մշակել ստորին յարաբերութիւններ։ Եւ անյաջորդութենէն զարյացած, ճշմարիտ նակօ մը որպէս, կր հիւսէ վաս դաւ մը՝ որուն զոհը կը դառնայ Աստղիկ, եւ որուն իրը արդինք կ'արտաքսուի ամուսնին տոնէն եւ անփառունակ մերդարձ մը կ'ունենայ դէպի Հօր տնակը։

Ամուսնայուժման դատը զոր կը բանայ Արամ, Պարոննեանի երդիծական էջերէն փրցուած կտոր մը, ըլլար կարծէք, այնքան որ ճշրդիտ կերպով նկարագրուած է Դատաստանական Խորհուրդի գործելակերպը, անոր «արդարասիրութիւնը», «սահմանադրականութիւնը»։ Որպէս արդինք ամենէն ծիծաղեի եւ միաժամանակ սարսափելի ու անմարդկային այս խեղկատակութեան, դժբախտ մօրմէն կը նլուի իր միակ միկիթարութիւնը՝ մէկ հատիկ զտակը։ Այս բոլոր տառապանքներուն հետեւանքը կ'ըլլայ հիւծախոր, որ դանդաղ այլ յատակ քայլերով կը յառաջանայ եւ գլուր փշուր կը կրծէ հէտ կողը արդին իսկ տկար ֆիղիքը։ «Վարժապետաց», միշտ անձարակ, կը դիմէ ամէն կողմ՝ դահեկան մը օգնութեան հա-

մար. եւ Գարեգինն է որ կը դառնայ նեցուկր այդ աւերուած տան։

Բախտի ի՞նչ լուս իրապէս եւ ի՞նչ տառապանք «վարժապետին» երր կը ստիպուի աղջկան ամուսնութեան մատանին ծախելու համար Գարեգինի դիմէլ, մինչ հազիւ տարի մը առաջ ուրիշ մատանի մը կը տանէր, անհոգ սրտով։

Վէպը չի փրչանար այնպէս՝ ինչպէս կ'աւարտին ընդհանրապէս վէպէր։ Երբանիկ եղակացութեան մը փոխարէն կը մեռնի Աստղիկ, ծնողքը եւ Գարեգին անմիթար կը մնան, մինչ դժբախտութիւններու եւ ինեղ ընտանիքի մը կործանման պատճառ եղողները կը շարունակեն հաճոյքի եւ մսխումի իրենց անիմաստ կեանքը ապրէլ, կատարելով վնասակար տատասկի իրենց սահմանուած դերը այս աշխարհի վրայ։

«Վարժապետին Աղջիկը յաջողագոյն բնագատական մըն է արիող մտայութիւններու, բարքերու եւ ընկերային կարգուարքի։ Մեղագրական մը բոլոր այն հատապութիւններուն եւ պայմաններու հասցէին՝ որոնց պատճառաւ կարելի կ'ըլլայ կէս զարի վրայ երկարող ուսուցչական գործունէութեամբ ա'լ խեղակ դարձած «վարժապետ»ի մը զլանալ ամենատարրական հանուսութիւն մը. որոնցմով՝ ոտնահարւած արդարին ճայնը կը խացուի եւ տակաւինի որոնցմով չարագործները ու վատասիրուներ կը բարձրացուին փառքի եւ առաջնութիւններու պատճանդանին վրայ։

Վէպը կր կազմէ ներդաշնակ ամբողջութիւն մը եւ կը կարդացուի յափշտակութեամբ, որովհետեւ Կամսարականի պատմելու ոճը արագ է, յանդուն փոխարերութիւններով եւ դիմէլու մեծ կարողութեամբ, նոյնիսկ այն էջերուն վրայ՝ ուր Զիլինկիրեանի թարդմանած «Թշուառներու» ոճը եւ արտայայտուելու եղանակը կը յիշել։

«Վարժապետին Աղջիկը որպէս գեղարւեսական երկ՝ հրատարակութենէն մօտ ութուն տարիներ ետք ալ կը պահէ իր թարմութիւնն ու այժմէութիւնը։ Ճիշտ այնպէս՝ ինչպէս որ թարժ են եւ անմիջական Պարոննեանի մը կամ Զօհրապի մը հեղինակութիւնները, կամսարական կեանքին

կը նայի երիտասարդի մը յատակ, ժաքուր աչքերով եւ իր տեսած ջարն ու բարին թուղթին կը զրոշմէ նոյնութեամբ, առանց աւելորդ յաւելումներու կամ զեղչերու։ Հոն գործ չունին արուեստական շպարն ու քըրիւներու, ըստոցմով յաճախ մեր զարգացները կը ծածկեն իրենց հերոսներուն գէմքերը։ Դիմակները չկան հնան, այլ ժարդիկ կ'երեւին իրենց առօրեայ հոգերով, մատառուներով եւ ներքին կեանքի ամբողջական մերկութեամբ։ Եւ թերեւս հեղինակնեն այս «միամտութիւնն» իսկ ըլլայ գլխաւոր պատճառներէն մին գրքին վայեած համակարանին ու հոչակին։ Որոցհաւեւ անո՞վ է որ մեր գրականութեան մէջ կը ժանէ նոր յունչ, նոր մօտեցում, կեանքը ընկափեյու եւ կեանքին նայելու նոր ու զեղեցիկ կեցածք։

Թէոդիկի Տարեցոյցին զրկուած ինքնակնագրական նօթի մը մէջ, Կամսարական 1910-ին կը որէ ի միջի այլոց։ «Արիխար զիս «Արեւելի դարձուց, ուր ընդունեց վեպս» «Վարժապետին Ազիկիր», առաջին realiste վեպը մեր մէջ որ մեծ դգրդ ու շատ թուեմուկ յատաց թերաւ, ինչ որ անոր արձանիքն ապացոյց պիտի նկատէի նրէ չկարմրէի հիմա աֆոր անգիտակից միամութեանց վրայ — 20 տարու էիս։

Որքան համեստութիւն եւ կամաւոր թերզնահաւտում։ Կարմրի ստեղծագործութիւններ մը ճիշդ այն պատճառաւ՝ որով խնդրոյ առարկայ երկր մեծ է ու թարմ արևեսուկ յեցուն...։ ՄԵՇ էին մեր նախորդները որպէս արուեստադէտ, բայց մանաւանդ մեծ էին իրեւս Մարտիր, որոնց ներշնչող օրինակը մեր այս անորոշ եւ անուղիք օրերուն որքն առաջնորդող կրնայ ըլլալ մեղի։

Ուրիշ առիթով մը, գարձեալ Թէոդիկի Տարեցոյցին մէջ (1923), ան կը գրէ. «Քառորդ դար մը յետոյ, չեմ գիտեր Խնչիկն, կամքի նիզ մը ըրի «Վարժապետին Ազիկր» կարդալու, հետաքրութենէ աւելի ժաղու-

թիւմ մըն էր ասիկա, զի կը կասկածէի իրաւամբ որ պառացող թերութիւններ վիտսային պատանեկան վեաի մը մէջ որ իմս էր։ Կարդացի ու շատագումնեցայ արդարեւ, իմազիս ամէկն իեղինակ որ հասում տարիին մը, իր առաջին երկր կը վերաքննէ։ ...Ըստ քէ շատագումնեցայ, բայց անկեղծ ըլլամ, յուղացայ՝ նաև ներարախու աղյկան պատճառը իւթիւն կարդայով։ Անտարքութիւն չըկայ զայս ըսելու մէջ, զի հետեւակ վիտաս մը նայինակ կրնայ, բարի դիպուածով մը, աղուոր նիւթի մը վրայ իյնայ, բայց կարսող չըլլայ «Ենիւր մը բնականորն յդանակ գինի, զայս իմաստափիրաքար ընդլայնել եւ արուեստոյշու կերպարանաւորել։ Իմազիկն, կ'ոնչ անլուր միամուռթեամբ յանցներ էի գրել այդպիսի վկա մը, հակառակ գրական տիասաւորեան ու այն ֆիչ բաթին գրի կեամբէն։ Անգիտակցութեանից շնորհիւ։

Արդեօ՞ք այդ անդիտակցութեան վերացումն էր, որ, ինչպէս յիշուեցաւ ակիզըր, պատճառ գարձաւ Կամսարականի մասնակի ամութեան։

Օ:ահանդի գրած իր նամակներէն մէկուն մէջ կը շէչաէ. «...Բայց մտնեամ մօն երր աշխարհին ունայնութիւնը ակնիւթիրի մը մէջ դառնեմ գուցէ այդ պահուն ափսոսում որ հետեւ աւելի ուժով չքաշեցի, տկօսը աւելի խոր չպնդեցի...։

Հիմա, երբ իր մահէն քառորդ դար է անցեր, այդ ափսոսանքը մէրն ալ է նոյն աւեն, բոլոր անոնցը՝ որոնք կը սիրեն Հայ Գրականութիւնը, Հայ գրադէտն ու Տիգրան Կամսարականի արուեստը։ Որովհեաւ իր երկարաւու լուլթեան եւ գժուարահաճութեան պատճառած կորուսուց թանկազին է մեղի ու մեր գուքը Գրականութեան համար։

Եւ, գերջանելու համար, ի՞նչ բան աւելի ճիշդ է ու տեղին քան Օշականի եղբակացութիւնը։

«Ամենն է ֆիչ իրաւունքը ուներ սիրազ գրագէտայի պատեանին մէջ քաշուելու։

**ԱՐԱՅ ԳԱԼԱՑՃԵԱՆ**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայր Կոմիտասին

Ինչ երաշարաւստ յուշարար մըն էք դուք նախնի ու արդի Հայ գեղեցկութեանց. լիահաւատ սիրավ, բարօրանուէր զաթեռվ հետազոտեր, որոներ, ի ժնար վերակաչեր էք մեր Քաղցրապու, ասուաւածաշունչ մեղեդիներն ու օրինարգութիւնները՝ որանց մէջէն մեր սուրբ նախնեաց հոգիները համբուրել տուիք մեզի: Ասիկա սակայն չի բաւեր ձեր արուեստագիտական ու հայրենասիրական վայ հետաքրքրութեան. երեսարքըն, զորգուրալիր, զմայլանով բարախում հարեսկին քարթակուր անշաւք ամկիւններէն, չկասկածամած, փշերաքախ խորշերէ վերազուեր, յարսւցեր, կենսաւեւեր էք դուք ահա Հայ գեղուուկ բանաստեղծութիւնը նաև, որուն տրամաքիկ թլուատումը, կոյս գեղեցկութիւնը պաշտի սուիք մեզի:

Ցուշարար ըսի, բայց դուք վելարաւը Զիշեռօն մըն էք աւելի. անցեայ զիշեր Université որուաւուէ սրամին մէջ երգելով ու քարտանելով, գուարեանանելով երբեմն այլ միշտ յանկուցանելով՝ Հայաստան ուխտազնացութեան տարիք գմեզ, կամ յան եւս է ըստ ինչ մը Հայաստան բերիք նզիպատոսի Հայերու. մենք կը կարծէիմք քէ Հայ կրօնաւորը որ էջմիածինէ՝ կու զայ՝ միւռուն միայն կը բերէ. դուք Մասիսն ու Արագածը փախադրեցիք հաս պահ մը. ո՞վ ըստ քէ լեռները չեն քալեր...

Բարձրացանք ձեզի հետ ցից կատարք մեր հայրենիքի շնունդուն, որանք չըստ հազար տարի է Հայութիւնը «կը դիսեն». իշանք ապա միասին սա ծաղկագուարք մարգագետինները՝ որունք Հայոց դաշտերն են, լսցինք հու՝ յակնիւ Հայ շինական մեր աղրբուաց ազու ու մերը գոռ անյնը որ կ'երգէ, կը երճուի, կը ցննայ. ինչ, վարդապետ, իրա՞ւ է արդեօք, Հայաստանցի Հայն ալ ցննութեան նիշեր, ուրախութեան շեշտեր, աղաղակնե՞ր ունի եղեր, մեր եւգ սիրական եղբայրը: Զիմենք գիտեր ատիկա. անակնեալը փղձինցուց գմեզ:

Մենք ո՞վ պիտի կարենայ մոռնու երբեք հայրենիքի հօգեզուարք այն տեսարանները, գոր խօսնվ ու երգով հեռագրագեցիք մեր գմայած աչքերուն առջեւ. վասնիք ձեր երգե, վարդապետ, ներդաշնկութիւն մըն է կատարեալ, գոյն ու պէսպիւարիւն ունի, խօրութիւն ու մքնարուտ ունի ւերկրին մքնութրու—, լոյն ու ստուեր ունի: Հայաստանը մեր շնկեօքը ։։։ տեսանք մենք:

Երբ դուք եկաք վերյաշել մեզի ու վերյայտել սիրայի ու հարազատ սա Հայ գեղեցկութիւնները՝ գորմէ ամուռու էլիմ մենք ի քէ՛ շփառում մը ունեցամք. — ցայն վայր անհարար հայրենի այդքան անուշակ քրբուումներուն՝ մենք տարաշխարի Հայեր թերի, ամկատար Հայեր եղած ըլլայինք. բայց ինչո՞ւ համար այն ատեն մեր սրտերը իրենց խոր խաւերուն մէջ այդ սաստկութեամբ գլրդեցին ի լուր ձեր «Եկուունկ»ին, «Մոկաց հշխան»ին ու «Սիփանայ Քաջեր»ուն...

Ով վարպետ վարդապետ, ինչ բանի աւելի հիանամ ձեր մէջ. ձեր արւեստոր այսի՞ն («որդեւակ ինչպէս յիշեցիք Կարինեն») քէ գիրանուրը արւեստին, պատարում գիտութեա՞՞ քէ բոցաշեց պերմախոսութեան, հրապուրիչ բանախօսին քէ ։։։ բայց դուք վիճակ մըն էք, հայր սուրբ:

Ներկայ էի ձեր համերգի փորձերուն, որպէսզի զնի մասամբ մը նա-

շակ սուանամ անկէ. ձայնի նարտարապետութեան Հայկական գուտ հրաշաւկերտ մըն է տաիկա: Զեր այդ համերգին մէջ Հայու հոգին է որ փոխն ի փոյշ կ'ալորէ ու կը սիրէ, կը հծծէ ու կը շանքէ, —իմզգինք կը պառնէ: Ի՞չ միանյլ հազմերգութիւն ու համատարած ներդաշնակութիւն, գարիբային ինչ վեհութիւն, նաև հերանու ինչ հեշտանք, ինչ գունազեղութիւն, մեւազնութիւն, զգացման բարեւութիւն ու խորութիւն. բայց մանաւանդ բնական ինչ շեշտ, ինչ համ ու բացցածք ներշնչաւմ, գոր գուէ այնքան արուեստահիւսեր, ըմֆելուգիբ էք արեւմտեան զիտուն ու կարի գժուարահան երաժշտութեան ինտ. եւ երէ Հայ Բնարք ճեր բարեյարդար արուեստին շնորհիւ այդքան բնական փարումազ մը խնամեցած է եւրօպակամին ինտ՝ ասիր ապացոյց մը չէ՝ թէ Հայ մոտիմ ծիրը որքան ենշու ու վայելուչ առաջարկութեամբ դէպի արեւմտեամբ կը դիմէ ու կը ճառի. ճեր համերգը այդու Շայ գեղին բարձրագոյն բ՛դումակաւթեամբ ու անոր անհում կատարելակամութեամ:

Դուք, վարդապետ, փաքրիկ երաշքի մը առիք տուիք մեր մէջ. հարիւր, յիսավէ եւ աւելի մանկսի, որոնք դեռ երէկ ստեղնաշարին առաջին խողի իսկ անկարող էին արուարելուու, կ'իրգին ինմաս «իրբու գրաս» Սերովրէիցօ. հայրենինք է որ բարախուց անհոնց սրտին գուստ խորշերուն մէջ, առաւաւութեան սբանինիք մըն է այս. ո՞վ պիտի ըսկը թէ այդքան ներդաշնակութիւն կար պահուրստած այս մասնցանկ կուրդթերուն մէջ: Սակայն դուք տակի մըն էք մանաւանդ, որուն վրայ Հայուն դարաւոր այլ յարանրազ հողին իր խորախուրդ բբռուամները կը շարումակէ արտայայտել անո: Քնարը գոր կը կրէք ձերինք չէ բոլորավիմ. Գողքաց երգիները մեր ցեղին յանձննած նուիրական աւանդ մըն է, գոր բախտին բարութեամբ ճեզի վիճակուեր է պահել ու պահպանի. ազգային սուացւածք մը, Հայկական սեփականութիւն մըն է անհիւա: Այդ սրբազնեալ աւանդն ի ճեսնին զացէք, հայր սուրբ, անդաստան կառապել ի Հայու համօրէն, զացէք հենչեցնելու ճեր Բնարք ի լուր տարանցաւ Հայութեան որ «Աւարայրի Պարուկ» միշշն էին ինմա Ալիշանվ միայն խասրիկ առած էր: Այդ պատուլը մեր արմաւենիներուն վրայ բառեր է հիմա:

Եւ երէ օր մը գեղգեղիէ ու հմայիէ, յուգելէ աւ յուգուէ պահ մը համզեւու համար հայրենիք կենսանորոց կազդյարը երքաք փնտուելու, ճեզի երկու ազաշամք ունիմ, վարդապետ. նախուն մեր կոզմանէ յարգական յուգեալ խոնարհութիւն մը ճեր նախակարապետութեան երանելի ծրեմա երաժշտին շիրմին առջեւ, որ հազար երիւ տարիէ ի վեր Արագածի կողը անեղծ ու անիքար պահուած է ըսիք մեզի գուստ խանդապաստնեով մը. Եւ յեսոյ, օհ, մամաւանդ՝ երք «արփոյն յառաջանազ նշայլավ» տրուի ճեզ բարձրածալ անդրէն այն լեռը որ Հայութեան ծագման նախագահեց, անոր վրայ «յիշեսիր եւ զինք», հայր սուրբ, ու լահչերմիդ Արարատի ծաղկանց բոյրովն ու շունչովն առլցուն՝ արձակեցէք հոն ճեր ու շշեղ ուժգնազօք ձայնը «ազառն ի վեր ի Մասիս»: Հեռաստանի արմաւախիլ Հայերէս առաջինիք մեր կարօնոյ որդիական ռզշյնը բռն ըլլայ ատիկա:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՄԱՐԱԿԱՆ

«Գոհարներ Հայ Գրականութեան» հասորէն

## ԲԱՆԱՄՐԱԿԱՆ

### ԶԵՌԱԳԻՐ ՄԻ ՏԱՂԱՐԱՆ Յ. ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒ ԵՒ Մ. ՆԱՂԱՇԻ ՏԱՂԵՐՈՎ

Խնջպէս նշել էինք «Փերիա գաւառի գրչագրերի համառու ցուցակ» յօդուածում (*«ՄԱՆՆ» ամսագիրը, 1965 թ., համար 9, էջ 323)*, Փերիայում գտնուող մի ձեռագիր տոպարանի մէջ կան երգեր, որոնք պատկանում են Հայ միջնադարեան երգիներ՝ Յովհաննէս թղկուրանցուն եւ Մկրտիչ նաղաշին:

Նախքան տաղերի մասին խօսելը, ձեռագրի մասին աւելի լայն գաղափար տալու համար ստորեւ ամբողջութեամբ նկարագրենք այս.—

ՏԱՂԱՐԱՆ-Ը բաղկացած է երեք անջատ մասերից, որոնք յետոյ միացուել եւ կազմւել են միասնեղ. տարրեր են երեք մասերի թուղթը, գրիչը, բովանդակութիւնը և լայն: Այսեղ սակայն մենք նկարագրում ենք միասն: Թերթիր՝ 159: Պատմին՝ 19, առաջն եւ երկրորդ մասերը բաղկացած են մէկական պրակից 14 եւ 12 թերթերով, իսկ երրորդ մասը՝ 17 պրակից, իւրաքանչիւրը 8 թերթ եւ միայն թ եւ ժք պրակները 12-ական թերթ: Պակասում են ա, բ, գ եւ ժապրակները մէկական, իսկ զ եւ է-ից 4 եւ 2-ական թերթ: Մեծութիւն՝  $14 \cdot 5 \times 10 \times 2 \cdot 5$  սմ.: Նիւթ՝ գեղնաւուն հասա ու փայլուն թուղթ, ա մասը՝ բարակ, փափուկ եւ ջուր տեսած: Կազմը՝ կաշեպատ, առաջինը՝ միացեալ թուղթ (այժմ բաժանուած), երկրորդը՝ սոսուարաթուղթ, վրան ճնշուած մաշուած զարդեր. ա կազմի մի մասը քարքայուած է կորուած, այրուելու հետեւանքով: Կազմը նախօրօք ունեցել է բարակ կաշով երես, որի մաշուելու հետեւանքով կրկն կաշեպատուել է եւ այժմ կրկին հնացել: Պահպանակներ՝ չունի: Վիմակ՝ բակերից եւ վերջից թերթ: Զգրուած թերթ՝ չունի: Թրութիւն՝ միասին: Տողեր՝

14, 16, 17, 18 եւ 21: Գծումները՝ ճնշուածով: Գիրը՝ նոտրադիր, ա մասը՝ անվարժ եւ խոշոր գրով, բ մասը՝ մանր գրով, իսկ զ մասը՝ վարժ ու գեղեցիկ ձեռագրով: Գրիչը՝ Ղարլան սարկաւագ (գ մասինը միայն): Միւսները անյայտ: Թանաքը՝ սեւ, վերնագրերը, մեծատառերն ու լուսանցքադերը կարմիր թանաքով: Զարդագրութիւններ՝ լուսանցքներում մի քանի զարդանկարներ, նոյնպէս եւ երգերի առաջին տողերի սկզբնագրերը զարդագրերով ու թոշնագրերով: Մազկող՝ անյայտ: Ժամանակ՝ անյայտ: Վայրը՝ անյայտ: Պատկրասու՝ անյայտ: Մանօպութիւն— Ձեռագրիր պատկանում է Արմենակ Տէր Յովհաննիսիսանին (Խոյգան գիւղ):

#### ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԻՆ(\*)

##### Ա. ՄԱՍ

Թ. 1ա-14թ.— Մրատներ (արձակ գրութ):

##### Բ. ՄԱՍ

Թ. 15ա-19ա.— «Արբոյն եր(փ)րեմի ասցեալ»

«Զինչ պատասխանի ումիցեմք արդեալ»

Թ. 19ա-26թ (թերթ).— «Մրատ հոգեշահ զոր ասացեալ է սուրբ հայրն մեր Ուշանէս Գառնեցից»

«Հառայակիցս ձեր ի Քրիստոս Յիսուս Ուշանէս Գառնեցի հարցանեմ...»

(\*) Զեւագրում նկան կրթատագրերը բացել ենք ամրացածն, իսկ ոչ մեծատառվ եղան յատակ ու առնենք գրել ենք մեծատառվ:

**Գ. ՄԱՍ**

Թ. 27ա-41ա. «Կայր մեծատուն մի ունէք ինչս բազումո...» (Սոյն պատմութիւնը այլ ձեռագրերում ունի հետեւեալ վերնադիրը. «Պատմութիւն մանկան եւ աղջկան եւ հարցունք նոցա ընդ միմեան», նաև տարրեր վերնագրեր):

1. Թ. 41թ-48ա. «Ճաղ Ալէքսանոս ձրգնաւորին<sup>(\*)</sup> ասացեալ է.

«Ասուուած զբած եւ մարդաբար նրակ նէր իսր ծառային» (24 տուժ):

2. Թ. 48ա-55ա. «Ճաղ եւ պատմութիւն Մարիասու եւ Կոսփարայ վաճառականաց. Ալյո մի վաճառական անոնն էր Մարիայ, Որ էր նոյ բանական ի յերկրի Ըստայ» (39 տուժ):

3. Թ. 55ա-59ա. «Ճաղ Ստեփանոսի նախավկային է ասացեալ.

«Ալյինեալ ի Ասուուած հայր եւ սուրբ հոգին, Ալյինեալ ազօրէր յաս Ասուուած որդին. Ան զգովն առն տէր Ստեփանոսին, Հասար լիցէր եղարք զման տարածամնին» (18 տուժ):

4. Թ. 59թ-61թ. «Ճաղ ուրախութեան ի վերայ խաղողին եւ գինուն ասացեալ է.

«Խաղող զինք գնվել պիտի բարը պաղովն հաւառար, Զի դու միայն ես գեղեցիկ, ամէն պաղոյ քան ու սալիքար» (8, 5 տուժ):

Նախավկերին տան մէջ յիշուած է Սարկաւագ անունը:

5. Թ. 62ա-62թ. «Ճաղ եւ գովասանք դիոյ.

Ալյան առաջին ժամանակին Որ զպողաբերքն անկցին, Քաւիչ մեզաց անուանեցին Այլ լից ու տուր, այլ լից ու տուր, Թող շառ ապրի իմ տէր տուրը» (8 տուժ):

6.-29. Թ. 63ա-120թ. «Ճաղ Յովասափուն եւ Բարաղամ ճգնաւորին<sup>(\*\*)</sup> ասացեալ են ողբին:

Զեռագրի 63-120 թերթերում գրուած են.

(\*) Բնագրաւմ՝ նզնորին:

(\*\*) Բնագրաւմ՝ նզնորին:

Յովասափի ու Բարաղամի առակները, բաղկացած 324 տունից, 24 տարրեր վերնագրերով: Առաջիների վերջում թ. 121 առում զրուած է «Ճունք յիշ» (324) ով որ կարգայ կամ օրինակէ թող զՂաբլան Սարկաւագն յիշէ»:

30. Թ. 121ա-124թ. Անառակին ասաւ.

«Ես եմ կորուսավ ոչխար,

Մոյրինավ ի սուրբ բա հօնէն,

Հովիւ քաջ ի վեր հայեաց

Բորբինաւ ի յիրիդր ամէն» (15 տուժ):

31. Թ. 124թ-128թ. «Ճաղ Նաղաջին ասցեալ է:

«Անցանէ մեծուրիմ ու փառէ աշխարիի,

Աների ու նակարի շինուած տանարի» (14 տուժ):

32. Թ. 128թ-130ա. «Յովանիսի Թուրկուր-կոր...»:

«Աչշր ինչես անցի ենտ ինձի,

Անպատար զու ծոռ կունայի» (10 տուժ):

33. Թ. 130ա-133ա. «Յովանիսի Թուրկուր-կորանցոյ. Ասացեալ է միրոյ:

«Գեմ բաւեար օդի բաւեար,

Ավի կուտաս միրոյ խապար» (27 տուժ):

34. Թ. 133ա-134ա.<sup>(\*)</sup>

«Են ենց տեսայ միրով մատած,

Ցարեւ նմոն արեւ ակումին» (5 տուժ):

35. Թ. 134ա-134թ.<sup>(\*)</sup>

«Ալյինեալ այշ անոն անման բամին,

Որ ի կողէն կիմ սունդել ե» (10 տուժ):

37. Թ. 136ա-138թ.<sup>(\*)</sup>

«Տուր արինուրիմ սնեսն Աստծոյ,

Հօր եւ Օրդոյ եւ Սուրբ Հոգուն»:

Այս երգը 19 տուն է, առուած է վարդի

(\*) Այս եւ հետագայ ասուամիշ երգերը ձեռագրաւմ առանձին վերթագրի չափեն, բայց պավենաւ մասնարդ մանրում յիշուած է նովանես անուան ուսուողը յայորը ոնքը առանձանուած են:



եւ բլրուկի մասին եւ վերջում աւնի Դարձանի (գրչի) անունը: Քառեակը բերում է՝ բառուեւ:

«Եմա ոպրմի դուք ասացեք,  
Կործող քամին Ղարան անուն.  
Դուք յշխանի ի Քրիստոս,  
Ցարժամ գոյն փաղում քարում:

38. Թ. 139ա-140ա. «Ճաղ Յովանիսին (ունի կրթատաղի նշան):

«Ալքել արեկ իմ խուփ սուրար,  
Փառք ու պատի ևս ստեղծօդին» (7 տում):

39. Թ. 140ա-140բ. «Միրոյ Յովանիսի:  
«Ումենք ունին զալմով հաշած,  
Բիրան ունին շարկը լցած» (5 տում):

40. Թ. 141ա-142ա. «Ճաղ Վարդիք:

«Գարում էր բացունք վարդին պաղամին,  
Քազցր նզանակ է պլաւանի ի գումրին» (6 տում):

41. Թ. 142բ-144բ. «Միրոյ Յովանիսի:  
«Դու արեգակն մնան ելանք ի յառաւուն. (\*)  
Միանչեալուսի դիմօք Միհյակ երեշտակն են  
միրեւ» (13 տում):

42. Թ. 144բ-153ա. «Ճաղ Վարդիք եւ  
պլպ(ու)լ(ին):

«Ալքան դրէք քամին որ պատաւական է,  
Հնայո այլ եւ մարմնոյ ուրախութիւն է»  
(39 տում):

43. Թ. 153ա-153ա. «Ճաղ սիրոյ:

«Ալքենալ անուն արարովնին,  
Որ զեյ ստեղծեր յափ մի հոդեն» (8 տում):

44. Թ. 153ա-154ա.

«Ճանայ սուրբք մի զեղեցիկ,  
Քան զարդեալ որ լուս կուտան» (4 տում):

45. Թ. 154ա-156բ. «Ճաղ սիրոյ Յովանիսի ասսացեալ է:

«Դու զանձ մնացական խնդրէ,  
Որ գոզոյ երկիւզ նայ շումի» (14 տում):

46. Թ. 156բ-159բ. «Միրոյ է տաղս:

(\*) Բնագրում յատաւուէ:

«Եյրէն մինչեւ ցեկն, զովին քանիմ խօսեան միան  
քը կու քաւէ  
Բէրնոփ ինձ էնցեղ կրակ, որ իմ սիրու անին  
ամենալ կու այրէն:

Տաղը գրուած է այբուբենի վրայով եւ  
ընդհատուում է թ տառի կէսից: Զեռադրի  
մնացեալ թերթերը պակասում են:

Պակասում է նաև ձեռագիր յիշատակա-  
րանը եւ միայն երկու տեղ գրչի կողմէն յի-  
շատակութիւն կայ, զոր բերում ենք սաս-  
րեւ.

Թ. 121ա-ւ «Ով որ կարդայ կամ օրի-  
նակէ թող զլարան Սարկաւազն յիշէ»:

Թ. 144ա- «Զգրող գրիս գերի գրադիրը  
գրչափորձարար յիշեցէք զլարլանն ի տէր»:

Միջում կան մի քանի յիշատակալու-  
թիւններ, որոնցից ամենաճինը կրում է  
1844 թիւը, զրուած նորդան զիշուում:

Ստորեւ տախոս ենք մի քանի համառօտ  
բաշարութիւն ձեռագրի երգերի մասին:

Խնչպէս բերուած վերնագրերը ցոյց են  
տայիս, ձեռագրի մէջ կայ 46 երգ, որոնցից  
24-ը մեր թուարկած Համար 6-29-ը (ձե-  
ռագրի թ. 63ա-120բ), որ սկսում են «Ճաղ  
Յովանափու» եւ Բարազամ ճնկնաւորին ա-  
սացեալ են ողբառ երգով, եւ միասնաբար  
ունեն 324 տում, յօրինուել են Առաքել  
Վարդապետ Բաղդիշեցու կողմից 1434 փեր-  
շական թուին: Այդ երգերից 24-րդը վեր-  
ջում ունի երգէի յիշատակարանը, զոր բե-  
րում ենք սոտրեւ.

Են թվական հոյոց որ ուրի հարիք է,

Ուրուս երեխի նոյն աւելորդին էն,

Ունաշափ շինեցաւ այս Առաքելի:

Վարդապետ իշխեցալ քամին խնդրով է:

Արդ աղաշնի զգեք որք եղանակիւէ,

Եւ բաղցրածայն իջուա սիրով զայս երգէն,

Եւ զիմ ննիցեալ յարօք յիշեցէ.

Եւ բոգուրիմ մեղոց խնդրէ:

Եւ որ յիշէ ի կամս բարի,

Եւ ասացի Ասուուած պարմի,

Անիքրա կենայ յշխոց իյամ աշխարհի,

և Եւ արժամի իցի անօրւմ Քրիստոսիք. (\*)

(\*) Առաքել Վարդապետ Բաղդիշեցաւ եւ վեր-  
յիշեալ երգերի մասին տեսմեն 8. Ամասեանի «Հա-  
կական Մատեականութիւն», Առ հասոր. էջ 1115-  
1116:

Միւս երգերից 11-ը պատկանում են Յովհաննէս Թէլուրանցուն: Այդ երգերից 8-ը տպուած են իմասուէլ Պրիվագեանի «Յաղաննէս Թէլուրանցի» գրքի մէջ (Երեւան, 1960 թ.): Դրանք են մեր համարակալած հետեւեալ երգերը՝ թիւ 1 (գրքի էջ 80), թիւ 32 (էջ 82), թիւ 33 (էջ 157), թիւ 34 (էջ 141), թիւ 35 (էջ 148), թիւ 36 (էջ 187), թիւ 38 (էջ 119) և թիւ 44 (էջ 122): Միւս երգերից երեքը, թիւ 39, 41 և 43, ու ունեն Թէլուրանցու անունը, տպուած չեն վերյշած գրքուն: Միւսք աշխատեցինք ձեռք բրել եւ համեմատել նաեւ 1954 թւ. միւ «Միւն» ամսագրուուն Ն. Եպօ. Ռովո կանի կողմից հրատարակուած երգերի հետ, բայց այդ համարաւոր չեղաւ մեզ:

Թէլուրանցուն պատկանող պապարուած երգերից ունաք, ձեռագրում եղածների ֆետ ունեն խոշոր տարրերութիւններ, խախտուած են որոշ տունների հերթականութիւնը եւ ունեն աւելի ու պակաս տուններ, ուստի ձեռագրի մէջ եղած երգերի հրատարական ժամանակ է միայն, որ հնարաւոր է այդ ժամին խօսել եւ տարրերութիւնները նշել, որ մուռէ է կատարելու մի այլ յարմար առիթով:

Միւս երգերից երկուուը՝ մեր Թուարկան 31 և 42-ը, պատկանում են Մկրտիչ Նազարին եւ տպուած են վերջին ներևանում լոյս տեսած՝ իշուարդ Խնդիկարեսնի «Մկրտիչ Նազար» գրքում (էջ 107 և 129):

Դրանցից թիւ 42-ը, գրքում եղածից աւելի ունի 26 տուն:

Զեռագրի մէկ տաղն ունի «Ղարյան» անունը (թիւ 36), որ երգում է վարդի եւ բրուրի մասին, իսկ թիւ 4 երգի վերջում լիշտաւում է Սարկաւագ անունը: Մասաւութ երգերը (թիւ 2, 3, 5, 30, 40, 45 և 46) չունեն որեւէ անուն յիշատակութիւն, ուստի առ այժմ դժուարանում ենք այդ ժամանին որեւէ խօսք տանի:

Ներկայիս ձեռագրի «Հաղարան»-ի 46 երգից բրում ենք, միայն Նազարի անունը կրող երկու երգը: Դրանցից մէկն ունի «Հաղ Նազարին ասացեալ» չս մերնատիրը (թ. 124-ը -128-ը No. 31), որ «Աթասական բաններ» ի Նազար Վարդագեաէ ասացեալ վերնագրով տպուած: Կ «Մկրտիչ Նազար» գրքում (էջ 129): Միւսը «Հաղարան»-ում ունի «Հաղ

վարդին ու պլառ(ու) լ(ին)» վերնագիրը (թ. 144-ը-153-ը No. 42), իսկ գրքում՝ «Վասին բլուրովին եւ վարդին» վերնագիրը (էջ 107): Առաջին երգը (էջ 129 No. 31), գրուած է այրութեանի վրայով եւ ձեռագրում ու գրք քում տուններով հաւասար են, միայն ունեն անշան տարրերութիւններ, իսկ երկրորդը (էջ 107), զրուում ունի 20 տուն, ձեռագրուում (No. 42) 39 տուն: Երկուակ միանման տանների թիւն է 13: Գրքում աւելի են՝ 1, 2, 3, 8, 15, 16 և 17 տունները, իսկ «Ճաղարան»-ում՝ սկզբի 1-26 տունները: Այսինքն երկուսի ունեցած ոչ նման տունների թիւն է 46 (7-ը գրքում աւել, 13-ը երկուում միանման, 26-ը «Ճաղարան»-ում աւել, դաշտար՝ 46 տուն):

Ստորեւ տայիս ենք Նազարին պատկանու երկու երգը ամբողջութեամբ:

1  
Տաղ Նազարին Ասացեալ ի  
(No. 31, թ. 124-ը-128-ը, գրքում՝ էջ 129)

Անցան մեծարքին ու վասէ աշխարհի2,  
